

սւյս՝ քան զայն»²², որն ստեղծվել էր 135 տարի առաջ: Այսպես հարստացել է նաև Տօնականը, իսկ Մշո Տօնականի մեջ փոփոխություններ է մտցրել նաև ինքը՝ գրչիբ: Այս է վկայում ձեռագրի առաջին թերթերում գրված հիշատակագրությունը «Քրիստոս Աստուած, ողորմեա Բարսեղին, որ զարինակս պատրաստեաց»: Այս բանի վկայությունն են նաև Տօնականի հարստությունը, նյութերի բազմազանությունն ու առատությունը: Գրիչը 539բ էջի ստորին լուսանցքում գրում է. «մնաց ի ճառէս փոքր մի, որ գիտենաս»: էջը վերջացել է և գլխադարձը հաջորդ էջի սկզբից նկարելու համար ճառը վերջից «փոքր մի» կրճատվել է նույն էջում տեղավորվելու համար: Եթե գրիչը կարող էր ճառը կրճատել, ապա, ստացողի պատվերով նա կարող էր և ավելացնել: Իսկ այս հարստացում և հեռացում էր Տօնականը իր սկզբնական տեսքից: Ուրեմն հիմք չունենք վճռականորեն մերժելու Մշո Տօնականի Մաքենացու խմբագրությունից սերելը, հաշվի առնելով, որ եղել է Սողոմոն Մաքենացու խմբագրությամբ Տօնական և գրիչ վարդանը իր ընդօրինակած Տօնականի սկզբում բերում է այդ մասին վկայություն: Ահա մի այլ վկայություն ևս, որ քաղել ենք ուրիշ ձեռագրից. «Պատմութիւն սրբոց հայրապետացն և վկայից, որ այժմ ճառընտիր կոչի, յայլևայլ լեզուէ թարգմանեալ եղև ի ձեռն բազմաց, իսկ յետոյ սուրբ հայրն Սողոմոն Մաքենաց հաւաքեաց ի մի տուփ և անուանեաց Տօնական, քանզի մինչև ցայն ոչ գոյր ի մէջ մեր Յայմաւուրք»²³:

Այս վկայությունները ավելի են բարձրացնում Մշո Տօնականի պատմական, մատենագիտական արժեքը: Նրա՝ Սողոմոն Մաքենացու կարգավորած Տօնականից սերելը հնարավորություն կտա վերականգնելու Սողոմոն Մաքենացու կարգավորած Տօնականը, եթե երբևէ այդօրինակ փորձ արվի: Վերը բերված մեջբերումը բացահայտում է նաև Մաքենացու Տօնականի բնույթը և օգնում Տօնականի և Յայմաւուրքի նմանության և տարբերության էությունը բացահայտելուն:

Հայերի մոտ Յայմաւուրքի գոյությունից առաջ, նրա պակասը, սկսած 747 թվականից, լրացրել է Տօնականը, ինչպես վկայում է մեջբերված հատվածը: Տօնականներում տոները նշանակված են «տարվա օրերու կարգաւ» և դրանց համապատասխան վկայաբանություններ, վարքեր, պատմություններ և ճառեր են բերված: Այդ կարգի տօնականների լուսագույն նմուշ կարող է ծառայել Վիեննայի № 224 Տօնականը²⁴, ուր «յայմաւուրք» վարքերը, վկայությունները և պատմությունները դերակշիռ մաս են կազմում: Տօնականը կոչվում է նաև «Նամակ Տանակի» ինչպես և «Պատմագիրք» անուններով, շեշտելով վկաների ու սրբերի պատմությունները:

991 թվականին Հովսեփ թարգմանիչը հայերենի է թարգմանում Կոստանդնուպոլսում նոր կարգավորված և ընդունված հունարեն Յայմաւուրքը և ուղարկում հայոց եկեղեցուն՝ օգտագործելու: Արդեն Հովսեփը նրա մեջ հայկական վկայաբանություններ ու վարքեր էր մուծել: Հաջորդ դարերում, Կիրակոսի, Իսրայելի և Գրիգոր Անավարդեցու ջանքերով ավելի լրացվում, ճոխացվում է աւելի քան զնորայն՝ զի շատ նոր վկայք աստ գրեցան՝ և հարստացաւ գիրքս

²² Արտավազդ արք. Սյուրմեյան, Յուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի, Երուսաղեմ, 1935, էջ 340:

²³ Մատենադարան, ձեռ. № 2271, էջ 215ա, 215բ:

²⁴ Հ. Տաշյան, Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա. Վիեննա, 1895, էջ 571—584: